



խոյն դիմում է յուսահատված որ պտրեն նրա  
 աղջիկը «նա հառաչում էր և անդադար  
 բացականչում էր որ նրա Նինային սպանել  
 են, խեղդել են»։ Մէլիք-Բէգլեարովը «սկսում  
 է հանգստացնել պառուկին և ինքը գնում է  
 գննելու տերրասը, որտեղ Նինան թափ  
 տալիս է եղել իր շորերը։ Մէլիք-Բէգլեարովը  
 եղբայրակում է որ անկարելի էր այդ տեղից  
 ընկնել գետը։ Յետոյ հաշտարար դատաւորին  
 հետ միասին իջնում են այն նեղ ծանապար-  
 հով գետը, որ տեղ, գետի ափին դարսած  
 դրած են լինում Նինայի շորերը և ողորմելու  
 բողբոլին ցամաք կոշիկները, որի տակից  
 կպած կանանչ խոտի հերթեր էին երևում և  
 որից Մէլիք-Բէգլեարովը եղբայրակում է որ  
 դա խոտի, այսինքն այդու մէջ մանդարու նշան-  
 ներ են։ Բայց ինչպէս են իջնում, հարցնում է  
 պրօկուրորի օգնական պ. Խօթօգլսկին։ Պատ.  
 մէծ դժուարութեամբ։ Հարց. Զօրօրինակ։  
 Պատ. ծանապարհը դարի վեր է, քարա-  
 ժայռ, նեղ և ծածկված ջրով։ Բայց կարելի  
 էր անցնել մինչև վերջին քարաժայռ, որ-  
 տեղից պիտի իջնենք գետը և որտեղ դար-  
 սած էր հանքուցեակի շորերը։ Հարց. Ինչ-  
 պէս ներքև գնացել այդ քարաժայռից։  
 Պատ. Ոստիկանութեան սպասաւորները բռ-  
 նած ունէին մեր ձեռքերից և ես ու հաշտա-  
 րար դատաւորը, իրարու ձեռքերից, օգնու-  
 թիւն քաղելով մի և նոյն ժամանակ զանա-  
 զան դաւազաններից։ Այստեղ պ. Յինամզ-  
 դարովը այլ ևս չէ համաձայնում շարունա-  
 կելու որոնել, ասելով «ի դուր ենք ժամա-  
 նակ կորցնում, մենք ջրի մէջ խեղդվածը  
 չենք գտնի, այստեղ յանցանքի հետքեր են  
 երևում, ուղարկենք քննիչն ետեւից։» Հարց.  
 Ի՞նչպէս էր այդ ժամանակ Կախիթ Զխո-  
 թեան, այսինքն ինչպէս էր պահում իրան։  
 Պատ. Սաստիկ շփոթված։ Հարց. Զօրօրի-  
 նայ։ Պատ. Նա անդադար բեխերն և մե-  
 րուքն էր գզգզում մատները կտարատում, առ-  
 հասարակ վրդովված գրութեան մէջ էր երե-  
 ւում։

քի կարծիքը: Այս անտանելի բարբարոսութիւնները աւելի անխիղճ կատարուում են իմ բնականութեան տեղում—Բայանդուր գիւղում, որտեղ կին ծեծելով ամեն տեղ հռչակված է մի 50 ամեայ ծերունի, որի երկար բեխերը, ձախտի խառնի-խուռն ծաղերը, փոս ընկած մանր աչքերը պարզ արտայայտում են խաղաղութիւն, ստախոսութիւն, զանազան խռովասիրութիւն, և չարա-մտութիւն: Մի օր, մի փամ, մի րօպէ չէ կարող քաղցր վարվել իր գերդաստանի հետ, իսկ սրա խեղճ կնիք տարին քանի քանի անգամ անտանելի քօթանքների չնորհիլ գնացել է հանդերձեալ աշխարհը և կրկին յետ է եկել, ամիսներով ձեռք ոտք կոտրած տեղաշարժի մէջ պառկել, և մահ-վանից հազիւ ազատվել: Գանի քանի անգամ են ինքն անձամբ պատահել եմ այս վայրերի բար-բարոսութեանը, և զրացիները օգնութիւն կան-չելով ազատել ենք կրտսման կնիք այս անողորմ ծերունու անգութ ձանկերից: Պատճառը Ուշին համարեալ, կամ կնիք դրացու տունը է գնացել, ուշացել, կամ մի օտար մարդի հետ պատահմամբ խօսացել և կամ ծերունու առաջարկութիւնը ուշ կատարել: Այսպիսի մարդիկներ մեր գիւղե-րում շատ առատ են, և փոքրերը մեծերից օրի-նակ առնելով առատանում են: Թողնենք սը-րանց և մի փոքր էլ գնանք գիւղերի մէջ, բայց ափսոս որ հենց առաջին քայլում թեղ կը պա-տահեն զանազան տեսակ զարշահողութիւններ, որովհետեւ իւրաքանչիւր տուն իր չեմքից երկու կամ երեք քայլաչափ հեռու մի զոռուելի աղբա-նոց ունի, որտեղ թէ արտաքնոց է և թէ դա-նազան տեսակ աղետութիւններ այդ տեղ տա-րուց տարի իրար վրա դարսելով զարշահողու-թեան մի բլրածն բուրաստան է կազմվել: Ե մտում է յաւիտեան գիւղացու չեմքի առաջ, երկի գիւ-ղացուց պարտեզներն էլ սրանք են: Դեռ չեմ յի-շում գոմերից դուրս թափած տաւարի աղբերի հազարաւոր կոյտերը, որքան արաջիկների հետ միասին մի կըքստաքսեք գործը, եւ արտաքնում գիւղի մէջ:

Հարկաւոր գիւղեր որ որոնես, շատ դժուա-րութեամբ կարող ես գտնել մի ամենահասարակ մանրամասնութիւն կամ մի արհեստաւոր խանութ, երկու կողմի բան էլ որ հարկաւորվի, մեր գիւ-ղացիք իսկայն քաղցր կը վաղեն: Մեր գիւղա-կանների գլխաւոր պարագայունքն է երկրագոր-ծութիւնը, որ սկսված ապրիլի կէսից մինչև սեպտեմբերի վերջը ամեն բան վերջացրած կը լինեն: Տարին երկու, երեք անգամ սովորութիւն ունեն սայլով կամ աղի գնալու կամ շինութեան համար փայտի, այս է... էլ ուրիշ պարագանք չունեն մեր գիւղացիք: Երկրեցէք որ մուսալայ մեր գիւղացիք մի գեղեցիկ պարագայունք էլ ունեն, այն է որ սկսված հոկտեմբերի մէկից հաւաքվում են միմեանց մօտ մի գոմի տաք օթախում, այստեղ մի քանիսը դաժմ են խաղում, մի քանիսը բանակախա անում կամ ու-րիշներին բամբասում, մի քանիսն էլ գոմի տա-քութիւնից նեղացած ընում են նստած տեղերը: Գլխաւորապէս գիշեր ժամանակ աւելի շատ են հաւաքվում յիշեալ տեղերում: այս ժամանակ էլ մինը դուրս է գալիս սենյակի մէջ տեղը և սկը-սում է առակներ, մաս աւելնել և հեքեքութիւն անել և բաղնիքները մինչև կէս գիշեր տրան-ցով պարագանքներ, իսկ վերջացնելուց յետոյ հե-քեքած ասորիս ալիւր, ալիւր, փաւրայ են խոս-տանում և գիշերվայ հանդէսը վերջացնում: Այն այսպիսի օգտաւէտ պարագայունքներով ամբողջ ձմեռը ճանապարհ են գցում:

Սարկէզ Տէր-Մէլքիսէդեանց

ՆԱՄԱԿ ՕԼԹԻԻՅ

Վերջին անգամ մտնելով Հայաստանի հողը,

պտտելով նրա մէջ մի ամիս, իջնանելով ինչպէս հայերի գիւղացիքում այնպէս ևս տաճիկների տարակոյս չը կայ, որ շատ բան լսած կը լինեմ նրանց բերանից վերաբերեալ իրանց այժմեան ու անցեալ դրութեան: Բայց պատահելով այժմ աւելի թարմ տպաւորութիւնների, կը թողնեմ առաջնականները յետոյ հարգելու և կստեմ մի քանի խօսք Օլթիի մէջ ու նրա շրջակայում եղած հայերի մասին:

Առաջին բանը, որ դարձնում է իր վրա ուշա-դրութիւն, այդ այն անուններն են, որ ունեն Օլթիի գաւառի տաճիկաբնակ գիւղերը, այսպէս օրինակ՝ Ագարակ, Գանձաձոր, Գեղանի, Սե-փայա, Նիշինի, Բարշէմ, Թերթի-Թաթի, Ար-քիլիսայ և այլն և այլն, ևս այն բազմաթիւ հայոց բառերը որ զործածական են այստեղի տաճիկաց

բարբառումը: Սորանից պարզ երևում է, որ այդ գիւղացիքում կամ առաջ հայեր են բնակվելու եղել, իսկ յետոյ թողել տաճիկներին ու հեռացել, կամ թէ պէտք է թիւրքացած լինեն: Հարցնելով ծերերից, տարաբաղաբար, երեսն վերջինը՝ Այս ցաւալի իրողութիւնը աւելի ևս ստուգ-վում է նորանով որ Օլթիի գիւղացիք աւելի կրօնամոլ են, քան թէ որ և իցէ տեսանելու: Յայտնի է որ այդ յատկութիւնը սեփական է, ըստ մեծ մասին, նորադարձներին: Այս տողերը գրե-լու ժամանակ, նամակս ընդհատեց մի քահանայ, որ եկել էր գանգաւալելու թէ իր տիրացուն, որ թիւրքացած է արդէն մի տարի առաջ, քարո-ղիչ է հանդիսացել այժմ և պաշտնում է իրան (քահանային) սպանել, եթէ միայն կը համար-ձակվի նա խափանաւոր լինել քարոզութեան մեր միջոցով: Գուցէ հետաքրքիր լինի ձեզ իմ դատաստանը: Կանչել տուի տիրացուն, որ եկաւ մօտս արդէն առանց չափայի, հրամայեցի մօտս բերանացի ասել. «հրաժարելով հրաժա-րիմը» և հեղուց Տեառնընդառաջի օր ժամասած լինել եկեղեցու մէջ: Այդ օրը ևս առաջին ան-գամ պէտք է լսվէր զանգակի ձայն մի քանի տասնեակ տարիների ընթացքում Օլթիի մէջ: զանգակը այս տեղի հայերը պահելու են եղել իրանց մօտ ծածուկ, իբր մի սրբութիւն, իսկ այս օր հրամայեցի կախել եկեղեցու վրա վաղվան համար, երբ խոստացել էին բոլոր տեղիս օֆիցե-րութիւնը գնալ հետս միասին եկեղեցի տօնելու ջրիստոնէութեան ազատութիւնը, որ պէտք է յայտնվի զանգակի հնչիւնով: Իսկ տիրացու Մար-տիրոսը, որ Հալի իւստֆի որ Լոյզուլ, պէտք է լինի հանդիսաւոր կատարել ալիւրի արծարծող: Չէ որ հեղուցվայ օրը հետաքրքիր է մեզ հա-մար... իմանալով ևս քահանայից որ վերս յիշ-ված գիւղերը թիւրքացած հայեր են, հետաքննիւ եղալ հարցնել. «կարելի է արդեօք կրկին վերա-դարձնել նոցա Գրիգորի հաւատը»: Քահանան ասեց թէ կարելի է և ցոյց տուաւ մի հետաքը-քիր և գործական միջոց: Նա ասեց որ կան շատ գիւղացիք, որտեղ դեռ մնացել են եկե-ղեցիք, ևս կան այնպիսիներ, որտեղ բնակիչների կէսը դեռ մնացել է քրիստոնեայ, բաւական է միայն քարչել այդ տեղերում մի մի հատ զան-գակ և նշանակել մարդիկ որոնք որ ամեն օր մի քանի ժամ շարունակ զօղանջեցնեն և անմե-տականների ակնաջին զանգակի ձայնը, այն ժամանակ մօլլաները սրբապղծութիւն համարե-լով լսել այդ ձայնը պէտք է թողնեն ու փախ-չեն այդ տեղերից: Իսկ երբ մի անգամ նոցա հեռացան, հաստատօրէն խոստանում էր քա-հանան, որ մնացածները առանց երկբայելու կը վերադառնան դէպի քրիստոնէութիւն: Չէ որ իսկակալ մի հետաքրքիր միջոց է այդ, և ես վճռել իմ իրագործել քահանայի միտքը, եթէ միայն հանգամանքները չը խանգարեն ինձ, և այդ հնչող կարող է պատահել որովհետեւ եկած եմ ես այստեղ ժամանակաւոր, նշանակված լի-նելով էրզրում ծառայելու համար: Ո՛վ պէտք է ուրեմն հակողութիւն ունենայ այդ մոլորեալ ոչ-խաղաղութիւն: Ո՛ր են մեր սեպագուհի հոգե-ւորականները, ինչ է չինում էլ միմաձինր... Առ հասարակ, Օլթիում բնակվող պաշտօնական անձը օր չի անցնել, որ չը ստանայ որ և իցէ վատ տպաւորութիւն, մօլլաների մոլեռանդութիւնից առաջացած: Օրինակի համար, երեկ բերին ինձ մօտ մի հայ Գուշուրուս գիւղից, որին մօլլայի հրամանով, խիստ պատուել էին գլուխը միայն այն պատճառով, որ նա համարձակվել էր կրօնա-մոլի ներկայութեամբ հայերէն խօսել իր բն-կերի հետ, Այս ամենից հետեւում է, որ նազա-նիք այս ժողովրդի հետ իսկապէս անտեղի է...

Միակ զուարճութիւն ու բաւականութիւն կա-րելի է գտնել այստեղ փոքրիկ հայ մանուկների հասարակութեան մէջ: Այս սանկիւօտները 8—10 հասակով խաղում են այստեղ այն զրդիչ դերը ժողովրդի մէջ, ինչ որ Ստամբուլ օֆիցները՝ Նոքա հաւաքված խումբ խումբ պատում են բոլոր օֆիցներների տները—այդ օֆիցներները պատ-կանում են տեղապահ զորքերին, թուով մօտ 1500 մարդ—պատում են նրանց միմիկներով կամ թէ թարգմանչաց լեզուով իրանց ծնողաց կրած նեղու-թիւնները և դրաւում են նրանց խորին համակ-րութիւնը դէպի իրանց վիճակը: Չը նայելով նրանց քնքշչ հասակին, հաւատացնում եմ և խոստովանվում որ նոքա ունեն այն կրակի լե-զուն, այնպի վիքը ու զարդացած զգացմունք ու ճանաչողութիւն աղբային պատուի, որ մի անգամ չէ պատահել որ նոցա սրտաշարժ խօսքերից վաղել են արտասուք իրանք ըստ ինքեան: Մի անգամ, երբ չը կարողանալով զգալ իմ վրդովմունքը նոցային մէկի պատ-մանքներից, ուղեցի ընդհատել նրան, ասելով

հանաքօրէն. «Հարկաւոր է ծեծել Մանուկին—այդպէս էր նրա անունը—նրա չափախառնութեան համար», նա առանց մտածելու, պատասխանեց ինձ իր թոթով ու անմեղ լեզուով. «Այ, երեկ չէր լինի որ մեր թոթից կերած հազար ծեծից մէկը քու ձեռքով լինէր»:

Իսկ ես եմ կողմից այդ խօսքերին նմանե-լորած կասեմ. Բն, երեկ չէր որ Թիֆլիսում պէնանէներով ման եկող կոստաօլիտները ունե-նային Մանուկի աղղղային եռանդի հաղորդից մէկը... բայց ինչ, ափսոս որ նոցա թիկունքը ծանօթ չէ թիւրքի փայտին...

Ուղիցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օրիորդ Անդրէկովուս սպանման գործի քննու-թիւնը վերջացաւ Թիֆլիսի նախագահական դա-տարանում մարտի 5-ին, կիրակի օրը: Գործը չարունակվում էր մի ամբողջ շաբաթ: Գալիթ Զիօտուս դատաւարութեան է քննա տարվայ տաժանակիր աշխատանքներին հանգրդի մէջ և Միբրիկայում մշտական բնակութեամբ: Նրա եղ-բայր Նիկոլայ Զիօտուս արդարեանցիւ է բո-լորովին: Իսկ գիւղացի Պետրոս Գաբիսոնիա դատաւարութեան է տաս արավայ տաժանակիր աշխատանքներին: Գործը չարունակում ենք սպել:

Կիրակի, մարտի 5-ին արվեցաւ Թիֆլիսի թատրոնում խաղական օպերայի վերջին ներ-կայացումն: Խաղացան «Տրօլմաթը» օպերան: Երեք տարի չարունակ Թիֆլիսում խաղական օպերա լինելու չէ:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալական լրագիրները գլխաւորապէս հրա-տարակում են տեղեկութիւններ նոր պապի ընտրութեանը վերաբերեալ: Արեւելեան հար-ցը երկրորդական տեղ է բռնած նրանց էջե-րում:

«Fanfulla» լրագիրը հրատարակում է որ երբ կարելիալ Պէկին 36 ձայն ունեցաւ իր կողմ: 5 ձայն միայն պակասում էր ընտրու-թիւնը աշողվելու համար: Հէնց որ քուէար-կութիւնը վերջացաւ, կարգիւնալ Պրանկին և իր կուսակցի կարգիւնները ծնրադրելով գե-տին խոնարհեցան կարգիւնալ Պէկին առաջ: Այդ օրինակին հետեւեցան նաեւ կարգիւնալ Պէկ-կի կուսակցիները, որով կարգիւնալ Պէկին ընտրված եղաւ ոչ թէ ձայների որոշումով, այլ ծնրադրութեամբ: Բիշ ժամանակից յետոյ, ժամը 1-ից քառորդ անցած, Վատիկանի մայր եկեղեցու մեծ օթեալը բայց արին և մի սար-կաւազ կարգիւնալ պատշաճից (բալիս) սո-վորակաւ ձեւով ժողովրդին հրատարակեց պա-պի ընտրվելը: Այնտեղ ներկայ գտնվող Ժո-զովուրը ծափահարեց և ամեն տեղից մեծ բազմութիւն սկսաւ դիմել դէպի մայր եկե-ղեցու կողմը:

Ժամը 4 1/2-ին նորընտիր պապը եկաւ մայր եկեղեցու ներքին օթեալը ուր նրան ընդունեցին ծափահարութիւններով և ան-դադար աղաղակելով. կեցցէ պապը: Պապը կարգիւնալից շրջապատված սկսաւ երգել սովորական սաղմոսը և յետոյ օրհ-նեց ամենին էլ: Օրհնութիւնը վերջացած ժամանակ էլ սատիկ ծափահարութիւններ եղան և արդէն ահագին բազմութիւն եկած լրացել էր այնտեղ: Եկեղեցիների բոլոր զան-գակները հրատարակեցին նոր պապի ընտրու-թիւնը որ գրեթէ ամենին էլ ուրախութիւն պատճառեց: Կարգիւնալ Պէկին չափաւոր կարգիւնների կանդիտան էր: Բայց կար-գիւնալ Պէկին և Լեոն XIII պապը մի և նոյն զաղապարները կուսենան թէ կարգիւնալ պապ դառնալուց յետոյ իր աստիճանի հետ իր զաղապարներն էլ կը փոխէ, այդ կողմէն Լեոն XIII-ի գործերը: Միայն թէ սա յայ-տնի է այժմէն որ պապային Թաթը կար-գիւնալ գլուխը դրվելով, իր ծանրութեան ներքեւ աւելի կը ճնշէ նրա աղատ մօտ-ծունները և զաղապարները: Բայց միանգա-մայն չը պէտք է մոռանալ որ Պիոս IX-ի ընտրութեան և Լեոն XIII ընտրութեան ժա-նանակների մէջ մեծ տարբերութիւն կայ և թէ այժմ պապի աղղղեցութիւնը քաղաքա-կան աշխարհի վրա շատ պակասած է:

Նորընտիր պապը ծնած է 1810 թւին ու-րեմն այժմ 68 տարեկան է: Նրա ծնողքը մի հին և անցնական գերդաստանից են: Իսկ

նի-դիի հռոմէական զարդում ուսում առ-նելուց յետոյ 1837 թւին Կրիգոր XVI պապի սպասաւորող եկեղեցական եղաւ: Բիշ ժամա-նակից յետոյ պաշտօն ստացաւ Բենեդիկտում որ Նապոլիի սահմանադրւելն է և իր գոր-ծունէութեամբ և աղղղեցութեամբ ջնջեց ա-ւաղակութիւնները որոնք շատ անգամ պա-տահում էին այնտեղ: Ցետոյ Սալոնի և Պօր-տիկի կառավարիչ եղաւ: 1843 թւից մինչև 1846, պապական դեսպանի պաշտօն վարեց Բրիտանիայում և Բելգիայի թագաւորից ստացաւ Լեօպոլդի աստիճանի մեծ ժապաւէնը: 1846 թւին Պետրոզե եպիսկոպոս ձեռնադրվեցաւ Կրիգոր XVI պապից: Բիշ ժամանակից յետոյ մի և նոյն պապը գրեթէ կարգիւնների կարգն էր դասել նրան, բայց խնայեց կարգիւնալ աստիճան ստացաւ Պիոս IX պապի ձեռքից, 1853-ի դեկտեմբերի 19-ին: Երբ 1877 թւի նոյեմբերին, կարգիւնալ Անտօնիէն մեռաւ, Պի-ոս IX որոշեց կարգիւնալ Պէկին իր գլխաւոր սենեկապետ և ծախաւորար կարգիւնալ Լեոն XIII բարձրահասակ և վեհ կերպարանքով մի մարդ է: Ասում են թէ իր նախնիներից մինը տասնչորսերորդ դարում հաստատել է Սպանիայում կրօնասէրների մի նոր միա-բանութիւն:

Հռոմից գրում են փետրվարի 3/15-ին թէ Կարիբալդին առողջացել է և թէ մտադիր է գալ Հռոմ, պարլամենտի նիստերին ներկայ գտնվելու համար:

### ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Վիեննա, 3/15 մարտի: «Presse» լրա-գիրն հեռագրում են Բուխարեստից հետե-ւալը. մոլովինիան մի շրջաբերական ուղար-կեց, որտեղ ասված է, որ Բեսարաբիան կը տայ միայն այն ժամանակ, երբ ոյժ կը գործ ածեն, որ Բեսարաբիա Ռուսաստանին տալը կը վստահ ամբողջ Եւրոպային: Կօրուջան չէ վարձատրում Բուլմիայի կորուստները: Բու-մինիան հակառակ էր, որ իր ընկերներից մէկը ուրիշ պետութեանը տալուն:

Լոնդոն, 3/15 մարտի: Անգլիական պար-լամենտի նիստում Պիլը ուշադրութիւն դարձ-րեց կոնգրեսում լինելու Անգլիայի ներկայա-ցուցիչ հարցի վրա: Նա այն կարծիքը յայտ-նեց, որ Անգլիայի ներկայացուցիչը պէտք է Կերբի լինի և ոչ թէ Լայօնա: Վիճաբանու-թեան ժամանակ Նորթոն յայտնեց, որ այդ տեղի համար Լայօնը աւելի սիրտնի է: Նա կը լինի ներկայացուցիչ կառավարութեան, որ պատասխանատուութիւն է առնում Լայօնաի գործողութիւնների համար:

Վիեննա, 3/15 մարտի: Աւստրիական աղ-բային ժողովը բիւրժուալ յանձնաժողովը վրձ-ուեց առաջարկել ժողովին 60 միլիոն գու-ղեկի կրեդիտի հարցը քուէարկել:

Վիեննա, 3/15 մարտի: Ինչպէս երևում է Աթէնքից եկած լուրերից ապստամբութիւնը տարածվում է Մակեդոնիայում: Փարսալի մօտ երկու ճակատամարտեր եղան, որտեղ 400 թիւրք են սպանված: Եպիւրոսի ապստամբ-ների դէմ ուղարկված են բանտերից արձա-կած յանցաւորներ: Հերցեգովինա թիւրքաց շատ զօրքեր են ուղարկվում: Այնտեղի զօր-քերը օգնութիւն և պաշար են ստացել:

Կ. ՊՈԼԻՍ, 3/15 մարտի: Սալֆես և Սան-դուլա-փաշաները ուղեւորվում են Բերլին կօն-գրեսում ներկայ գտնվելու: Ապստամբութեան տարածվում է Սալօնիկի և Թեսալիայի գա-ւառներում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5/17 մարտի: «Правит. Вѣст.» լրագիրը ասում է, որ երկ հանդի-սաւոր առեղիցիայի ժամանակ Կայսրը ըն-դունեց թիւրքաց դեսպան Բեռք-փաշային: Այդ ժամանակ Նորին Մեծնութեանը ներկա-յացան Բեռքի որդի Նախիլ-բէյ, քարտու-ղար Նիզալ-բէյ և Բեռքի ակտան: «Новое Время» լրագիրը հարցրում է, որ այսօր հաշտութեան հաստատած պայմանները կը փոխարկվեն: Երուզ Բեռք-փաշան կը վե-րադառնայ Կ. Պոլիս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 4-ին: Լօնդօնի վրա 25<sup>15</sup>/<sub>16</sub> պէս, Կերմանիայի վրա 221 մարկ, Փարիզի վրա 271 ֆրանկ: Պետական բանկի 5% տոմսի վրա շրջանի 95 ռ., 75 կօպ, ք. 95<sup>1</sup>/<sub>3</sub> ռ., ք. 95<sup>1</sup>/<sub>3</sub> ռ., ք. 94<sup>1</sup>/<sub>8</sub> ռ., ներքին ա. 5% փոխառութեան տոմսը 234 ռ., 50 4., ք. 231 ռ., 50 4., արեւելեան 93 ռ., 25 4., Պօլսիմպէրիալ 7 ռ., 64 4.:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ